

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

(տարաբարձրացրել գինում են ուղղակի
Тифлисс. Редакция „Меск“)

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(հացի կերակրի և տնն օրերին):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիցուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր խօսքերը իրազեկում են:—Ներքին տեսութիւն: Նամակ Մեծ-Վարաքիսայից: Նամակ Խմբագրի: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Մի նոր ընկերութիւն: «Temps» լրագրի թղթակցութիւնը հայերի մասին: Նամակ Թիֆլիսայից: «Մշակի» հեռագրիներ: Յայտարարութիւններ:

ՄԵՐ ԽՕՍՔԵՐԸ ԻՐԱԳՈՐԾՎՈՒՄ ԵՆ

Երբ որ մենք ասում էինք որ Վ. Պօլսի հայերին յատուկ է կապիկութիւնը, մեզ չէին հաւատում: մի քանիսներ և նրանց թուում և մեր մի քանի լրագիրները մեզ դէմ յարձակվում էին:

Բայց ահա, այս օրերս, բաց անելով «Մասիս» լրագիրը, մենք գտանք նրա էջերի մէջ «Հայրենիք» լրագրից արտատպւած մի յօդուած, որ մեզ տեղեկացնում էր թէ Վ. Պօլսի մէջ դարձեալ հիմնվեցաւ մի նոր ազգային ընկերութիւն «Հայոց միաբանութիւն» անունով:

Ուրեմն հազիւ միացան «Արարատեան», «Դարոցասիրաց» և «Կիւրիկեան» ընկերութիւնները և դեռ ևս իրանց համար նոր անուն չը որոշեցին, արդէն հիմնվում է մի նոր ընկերութիւն և իր անունը դնում է «Հայոց միաբանութիւն»:

Մենք տարվայ «Մշակի» համարներում մենք մանրամասնաբար բացատրած էինք այդ տեսակ բազմութիւ և մի և նոյն նպատակին ձգտող, մի և նոյն պրօգրամ ունեցող ընկերութիւնների փաստը, յորդորելով եղածները միանալ մի ընդհանուր ընկերութեան մէջ: Մենք աւելորդ ենք համարում կրկնել այժմ մեր ասածները:

Միայն այսքան կասենք, որ եթէ Վ. Պօլսի հայերը կը զբաղվեն միայն նոր նոր ընկերութիւններ հիմնելով, առանց աշխատելու հիւսերը զարգացնելու և նրանց գոյութիւնը հաստատ հիւսերի վրա կանգնեցնելու, կաշխատեն միմեանց մէջ մրցելու, փոխանակ ընդհանուր ոյժերով գործելու, երբէք ոչինչ օգուտ չեն բերի այն երկրին, Հայաստանին, որ իրանց հոգացողութեան առարկայ են դարձրել:

Վերջացնում ենք մեր խօսքը խնդրելով մեր ռուսաստանցի հայերին չը յափշտակվել մեծ մեծ խոստումներով և գեղեցիկ ֆրագներով, չը յափշտակվել նոր անուններով ու տիտղոսներով, այլ հրաւիրում ենք նրանց շարունակել համակրել և օգնել արդէն եղած «Արարատեան» ընկերութեանը, որի գործունէութիւնը և ազգին մատուցած ծառայութիւնները արդէն յայտնի են և որ այժմ միացել է երկու միւս նոյնքան յայտնի և յարգելի ընկերութիւնների հետ, կազմելով մի նոր, ընդարձակ, կենտրոնական, միացած ընկերութիւն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵՆՎ-ՎԱՐԱՔԻՍԻՍԻՑ

Փետրվարի 12

Կարգալով «Մեղուն» 9-որդ համարում Վարաքիսի անտառապետի գործի մասին մի հարույժ լուր, մենք ևս շատ զարմացած թէ պ. լրատուն ինչպէս է յանդգնել այդպիսի մի պաշտօն սուտ տեղեկել, իբր թէ երբ «Մշակի» յօդուածները կարդացվեցան մեր առաջ, մենք բոլորովին հրաժարված ենք, թէ այդ մեր գրածը չէր, և այլն և այլն: Ինչպէս երևում է պ. լրատուն կամ պ. անտառապետի կողմից գործիքներից միմե է (որպէս թէ չենք ճանաչում պ. լրատուն թէ ով է, ինչ ծառի պտուղ է), կամ նրա թէյից երեւին երբեմն խաչտել է. եթէ ոչ անկարելի էր գրիչ վեր առնել և այդպիսի յայտնի չողորթութիւն անել:

Մենք թէ թղթակիցներս և թէ մեզ հետ գործող անդամները ինչ որ ասել ենք «Մշակի» անցեալ համարներում յիշեալ գործի մասին, նոյնը կրկնում ենք և այժմ և կրկնելու ենք ամեն տեղ: Մենք մեր սկսած գործը հազար անգամ չափել և ձեռն ենք և այնպէս ենք սկսել և ոչ թէ պ. լրատուի նման կոյրեցողութիւն: Վերջապէս մենք մեր սկսած գործից ոչ հրաժարվել ենք և ոչ հրաժարվելու ենք: Ուրեմն պ. լրատուն լաւ կանի որ աւելորդ ցնդաբանութիւններով չը պարսպի և հանդիստ նստի Բարվախարայ գիւղում: Մենք եթէ ուզենայինք կարող էինք մերկացնել պ. լրատուի ով լինելը, նկարագրել նրա բոլոր գեղեցիկ յատկութիւնները, որոնցով շատերին զոհաբերել է:

Չը մոռանալք ասել, որ մենք մեր գրած ամեն մի պունկտին առանձին գրաւոր փաստեր ներկայացրինք պ. քննիչին և միմայոյս ենք որ արդար զատառտանը մտովի ապագայում երևան կը հանէ մեղաւորին:—Վերջացնելով նամակը, խնդրում ենք և «ՍԵՐՈՐԴ» լրագրին, իր նախկին սխալ ուղղելու համար, անպատճառ խորատակ այս մեր ասածը ռուս ընթերցողներին միամտացնելու համար:

Ստորագրեցին՝ Ասատուր Շարաթեան և Փաշայ Հայրապետեան:

ՆԱՄԱԿ ԽՕՍՔԻՐԻՆ

Թիֆլիս 17 փետրվ.

Չեր պատուական լրագրի 19-որդ համարում տպած էր մի արտաքին նամակ Թիֆլիսայից, որը հաղորդում էր մեզ Վանի սովատանջների գրութիւնը: Այս նամակը բարձր ձայնով կարգացի ընկերներին մօտ.—նամակի հէնց առաջին տողերը մի տխուր տպաւորութիւն արին նրանց սրտերի վրա և երբ լսեցին «հաց, հայրիկ, հաց...» բառերը, զինները բարձրացրին և մի այնպիսի անակարգութիւն հայացքով նայեցին իրար երեսի, որ կարծես թէ, այն բոլորն ուղեցին իրանց եղած չեղածը գոհել նրանց համար մի կտոր հաց ձարելու... Բայց ասիւ—այս մարդասէր պատանները բացի 5 ռոգի թիֆլիսցիներից՝ էին օտարերկրացի աղքատ աշակերտներ կապիքական Գիմազիտի, որ ոչ եղած ունէին, ոչ էլ չեղած, բացի իրանց դասագրքերից և մի քանի մանէթից, որոնց առաջինները հէնց իրանց էին անհրաժեշտ, իսկ երկրորդից իւրաքանչիւրը խոստացաւ իր կարեաց չափ մի մասը հանելով ընծայել Վանի սովատանջների օգտին: Վերջապէս այսօր ժողովեցաւ նրանց խոստացած ռուբլիքը և կուպէկները (ընդամենը 27 մմթ. 10 կ.), յանձնելով ձեր խմբագրատանը, խնդրեմ հասցնել յիշեալ սովատանջների օգնողներին: Ահա նուիրալ տունների անունները:

Մ. Կոլմանեան 5 ռուբլի, Ա. Պօպովեան 3 ռ., Ս. Տէր Գրիգորեանց 1 ռ., Կ. Շահնազարեանց 1 ռ., Ա. Սարգսեանց 1 ռ., Ն. Տէր Գեորգեանց 1 ռ., Գ. Թադէոսեանց 1 ռ., Մ. Մարգարեանց 1 ռ., Աւետիսեանց 1 ռ., Յ. Մելիքեանց 1 ռ., Մ. Գարուլթիեանց 1 ռ., Ս. Միսիթարեանց 1 ռ., Ա. Քալանթարեանց 1 ռ., Տ. Շահնազարեանց 1 ռ., Ա. Խանդավարեանց 1 ռ., Ա. Դանիէլ-Բէկեանց 60 կ., Ա. Գովհանջեանց 50 կ., Տ. Գրիգորեանց 50 կ., Ս. Տէրեանց 50 կ., Մ. Ախիշեանց 50 կ., Յ. Լազարեանց 50 կ., Գ. Ենգիբարեանց 50 կ., Ս. Սարգսեանց 50 կ., Հայոն 50 կ., Բ. Միքէլեանց 25 կ., Ե. Սմբատեանց 25 կ., և խմբայեանց Գովհանջեանց 1 ռ., ընդամենը 27 ռուբլի և 10 կոպէկ:

Ս. Տէր-Գրիգորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են որ վաճառական Տէր-Նիկողոսով, որ խանութ ուներ Գլօրցովի փողոցի վրա գտնվող, նորերումս այրված Սարաջիկի տան մէջ, արդէն կալանաւորված է դատաստանական քննիչի առաջարկութեամբ, որովհետեւ նրա վրա կասկած ընկաւ թէ նա զիտմամբ կրակ է տուել իր խանութին:

«Кавказ» լրագրի մէջ տպւած էր նորերումս կովկասեան ռուսափառական չըջանի պ. հոգաբարձուի չըջաբերականը զէպի ժողովրդական ուսումնարանների գրեկտութիւնը, որի մէջ պ. Եանովիկին խօսելով արուեստագործական դպրոցների մասին, հրաւիրում է բոլոր գրեկտութիւններն ուսումնասիրել մեր երկրի քաղաքները ու գիւղերը, հետազոտել ազգաբնակչութեան հակումները, նրա պարագայութիւնը, նրա մէջ ծաղկած արուեստները, քննութեան տակ զոյգել այլ և այլ քաղաքների և գիւղերի տեղագրական գիւղը, որպէս զի հնարաւոր լինէր այս կամ այն տեղ, նրա արդիւնագործական պահանջման համեմատ, հիմնել այս կամ այն արուեստագործական դպրոց:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են: Եւհաննապետ Զավչովաձէի հեռանալուց յետոյ Շուշու մէջ կրկին սկսել են յայտնվել գողութիւններ: Այս միջոցներումս վեց հայի տան մէջ պատահել են գողութիւններ և մի քանի տեղերից բաւական ապրանք են տարել:

Ոստիկանութիւնը շատ է աշխատում այդ գողութիւններին առաջն առնելու:

Մի քանի թիւրքիացի հայ արուեստաւորներ, որոնք Թիֆլիսում են բնակվում, հաւաքել են իրանց մէջ և իրանց ծանօթները 37 ռուբլի 50 կոպ., յօգուտ Վանի սովատանջների և ներկայացրել են այդ գումարը «Մշակի» խմբագրութեանը: Ահա նուիրատու անձանց ազգանունները. Պետրեան Պալատեան 1 ռ., Ղուկաս Զուխարեան 1 ռ., Սիմէօն խաչատուրով 50 կ., Պօղոս մահմաթի Գալուստեան 2 ռ., Գովաթիմ Տէր-Գովհանջեանց 1 ռ., Գովհանջեան Գեղեան 1 ռ., Պետրոս Տոնապետեանց 1 ռ., Մ. Կարապետ Գովհանջեան 50 կ., Եղբարք Աբրահամ և Կարապետ Ղազանճեան 3 ռ., Վանանդ 3 ռ., Գրիգոր Գալուստով 1 ռ., Աւետիս Փաշալեան 3 ռ., Մկրտիչ Փաշալեան 1 ռ., Կարապետ Ազրիպպա 2 ռ., Մկրտիչ Աղամեան 3 ռ., Եղբարք Երմեանց 3 ռ., Առաքել 3 ռ., Մարտիրոս Արզումանեան 2 ռ., Բարսիլոտ յոյն 2 ռ., Թովմաս Խուրտեան 50 կ., Գեորգ Գովհանջեան 3 ռ., Ընդամենը 37 ռ. 50 կ.:

ԼԵՆԳՈՐԱՆԻՑ պ. Նիկողոսով Նազարէզեան ռուբրուում է մեզ 10 ռուբլի և գրում է մեզ. «Մենքալ տարվանից խոստացած եմ ամեն տարի վճարել «Արարատեան» ընկերութեանը 10 ռուբլի: Ուստի և այս տարի ուղարկելով ձեզ այդ գումարը, խնդրեմ հասցնէք իր տեղը:»

Ստացանք թիֆլիսաբնակ պ. Աւետիս Վալբապետեանից 10 ռուբլի յօգուտ Վանի սովատանջների:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մի ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի օր Ղալաթիոյ ազգ. մատենադարանին մէջ ուր հաւաքեալ էին 40-ի չափ պատուաւոր ազգայինք ընդ նախագահութեամբ ս. պատրիարք Հօր «Միաբանութիւն Հայոց» անուն ընկերութիւն մը հաստատվեցաւ, որոյ նպատակն է հայ ժողովրդեան կենցաղը դիւրել նիւթական և մտաւորական միջոցներու զարգացմամբ: Այս ընկերութեան պիտի անդամակցին ամեն ուղղայինը, որը տարին 20 դրուշ կուզեն վճարել թէ ճաճկաստանի, թէ Ռուսաստանի և թէ Պարսկաստանի մէջ: Այդ տեսակ ընկերութեան մը պէտքը թէ և մէկ ու կէս տարի առաջ զգացուած, սակայն ինչ ինչ պատճառներով մինչև ցարդ գործադրված չէր:

Ուրախ եմք որ ս. պատրիարք Հօր ազգասիրական ջանքի շնորհիւ այսպիսի պատուաւոր ընկերութիւն մը հաստատվեցաւ, որոյ կարեւորութիւնը առաւել քան զամենայն վերջին ժամանակներս զգայի եղած էր, զի Ռուսաստանի և Տաճկաստանի մեծահարուստ ազգայինք որը կուզեն ազգին մեծ մեծ գումարներ նուիրել կամ կտակել, կարող չէին իրենց բաղձանքը պատել բովանդակ ազգին անեղծ փտահոգութեան արժանի և երեւելի ներէ կազմեալ ընկերութիւն մը կամ մարմին մը չը գտնելով ազգին մէջ:

Ըսածիս օրինակ կրնայ ըլլալ Տփլիսեցի ազգասէր Հայոս մը նամակը, զոր առ. ս. պատրիարք Հայրն ուղղած է և որուն մէջ ազգին 8000 ոսկի նուիրելու բաղձանքն ու պիտաւ:

երու-թիւնը կը յայտնէ և սակայն մասնաւոր ընկերութեանց յարատեւութեանը վրա լիութիւն վստահութիւն չունենալով, երաշխաւորեալ մարմնոյ մը կուգէ յանձնել այն գումարը, ազգին օգտին զօրեղանալու համար: Տիրիսի ազգաւորը կը խնդրէ ու պատրիարքէն որ իր գրոյն պատասխանը փութացնել բարեհաճի, որպէս զի ինքն անձամբ Կ. Պօլս գալով յանձնէ խոստացեալ գումարը:

Աւստի այսպիսի յիշատակաց արժանի գործի մը յաջողութիւն մաղթելով կը յորդորեմք մեր սիրելի ազգայիններն որ սոյն օգտակար հաստատութեան չը զլանան իրենց օժանդակութիւնը:

(Հայրենիք)

«TEMPS» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ

«Temps» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը, հայերի վերաբերութեամբ, հաղորդում է հետեւեալ հետաքրքիր տեղեկութիւնները, որոնց կարեւորութիւնը ճանաչելով, մենք հարկ ենք համարում ներկայացնել նրա թարգմանութիւնը «Մշակի» ընթերցողներին: Ահա այդ թարգմանութիւնը:

«Անատոլիայի անցքերի վերաբերութեամբ իմ հաղորդած տեղեկութիւններն արժանի են ուշադրութեան, եթէ մինչև անգամ այս հարցի վրա նային այն դժուարութիւնների տեսակէտից, որոնց Անգլիան յանձն է առել ոչնչացնել:

«Անի հայերն անգլիական փոխ-հրկայատու կապիտան Կլէյտոնի մօտ պատգամաւորութիւն ուղարկեցին, որը նրան ներկայացրեց մի աղերսագիր, որ լցված էր մի քանի հազարաւոր մարդոց ստորագրութիւններով: Այս վարմունքով հայերը կամենում էին ազդու պաշտպանութիւն գտնել քրիզերի յարատեւ ծնունդների դէմ այն պետութիւնից, որի ներկայացուցիչ էր համարվում պ. Կլէյտոն:

«Պ. Կլէյտոն պատասխանեց պատգամաւորութեանը, թէ նրան էլ շատ լաւ յայտնի է որ նրանց բողոքները արդարացի են, որ նոյն իսկ նա ինքն էլ վրայ է կոխել քրիզերի անտանելի ծնունդներին և որ ինքն այդ մասին արդէն տեղեկութիւն է տուել իր կառավարութեանը: «Բայց, աւելացրեց նա, Ռիարբէքիում Արեւելի-փաշայի ձեռքով, իսկ երգումում կայսերական յանձնաժողովի միջոցով կատարված վերանորոգութիւնները հաւաստի ապացուց են, որ բարենորոգութիւնները կը հասնեն մինչև ձեր նահանգներին էլ: Եթէ մինչև այժմ դուք դեռ չէք վայելում խոստացված բարենորոգումների պտուղները, դրա պատճառն այն է, որ դուք բաւականին հեռու էք գտնվում կայսրութեան կենտրոնից:» «Աստղամաւորութիւնը զոհ չը մնաց նրա յայտնած պատճառից, և առեց հետեւեալ պատասխանը հիւպատոսին:

«Բ. Դուռը, Բերլինի դաշնադրութեան 61 յօդուածով, մեզ խոստացել է առանց ուշացնելու զործարդել այդ վերանորոգութիւնները: Մենք որ վրայ ենք եղել այնքան խոստումներ, այնքան յուսադրութիւնների, որոնք Բ. Դրան կողմից հեշտութեամբ արվել են մեզ, և որոնք միշտ անիրագործելի են մնացել, մենք չենք կարող այդպիսի խոստումներին նորից հաւատալ: Բայց տեսնելով, որ Ներսիսի հետաքրքրվում է այս հարցով, տեսնելով որ Անգլիան, յունիսի 4-ի դաշնադրութեամբ, իր ձեռքն է առել վերանորոգութիւնների իրագործումը, մենք սկսել ենք յուսալ: Սակայն, մինչև այժմ զործ արված միջոցները, որոնք այնչափ վատահու-թիւն են ներշնչում ձեր գերազանց-ցութեան, մեզ անբաւարար են թվում և, ճշմարիտն ասած, դրանց նպատակն է միայն շլացնել Ներսիսին: Իսկական վերանորոգու-

թիւնների վերաբերութեամբ, մենք հիմնաւոր պատճառներ ունենք երկիւղ կրելու, որ նրանք դեռ երկար սպասել կը տան իրանց:

«Դուք մեզ խորհուրդ էք տալիս համբերել, բայց դուք պէտք է գիտենաք, որ 76-ին մի զարհուրելի հրդեհ միւսիք դարձրեց մեր բաղարը, որ մեր բոլոր հարստութեան միակ ըշտեմարանն էր. և վերջին պատերազմի էլ վրա հասնելով, վերջին ծայրը հասցրեց մեր թըշուառութիւնները: Այսպիսի պայմանների մէջ մեզ անկարելի է սպասել: Դուք մեր երկրում էք, և դուք ձեր աչքերով տեսնում էք, թէ դժուար է հարստահարութիւններին վերջ դնել, եթէ միայն անկեղծ ցանկութիւն լինի: Ճշմարիտ է, որ Արեւելի-փաշան Ռիարբէքիում մի քանի վերանորոգութիւններ մտցրեց, բայց երբ նրան ուղարկեցին Սիվաս և երբ նրա սկսած զործը ընդհատվեցաւ, այդ մի տեսակ աքսորը շատ քիչ յոյս է տալի մեզ զործի ապագայի մասին:»

«Պ. Կլէյտոն պատասխանեց պատերազմից աւել կարելի էր ելնել: Երբ որ յայտնված վերանորոգական միջոցներն նպատակն էր շլացնել Ներսիսին: Այսօր դա անկարելի է, որովհետև Ներսիսի հիւպատոսները հսկում են այդ վերանորոգութիւններին իրագործման վրա, և դրանց մասին հաշիւ են ներկայացնում իրանց կառավարութիւններին, թէ և ճշմարիտն ասած, այդ վերանորոգութիւնները փոքր ինչ ուշացած են վերջին պատերազմի սարսափելի դիպուածների և Ֆինանսական ճիւղաժամի պատճառով, որը այնպէս աստիճանաբար է պետական դանձարանի վրա:

«Աստղամաւորութիւնը պնդում էր հիւպատոսի առաջ, որ շարունակ հարստահարութիւնները և ծնունդների անտանելի դրութեան մէջ են գնում նահանգի աշխատող ազգաբնակիչները: Քիւրդերը, աւելացրեց պատգամաւորութիւնը, այսօրվան օրս վերջին պատերազմի շնորհիւ, ունեն իրանց ձեռքի-րում նոր տեսակի զէնքեր: Տեղական իշխանութիւնները մեր հարստահարողներին դի-նաթափ անելու համար մեծ անհոգութիւն են գործ դնում: Սրանից յետոյ կարելի է ելնել թաղերի, որ իշխանութիւնները իրանք են տուել այս զէնքերը քրիզերին, որ գործ դնեն այն ժողովրդի դէմ, որ սուլթանի հաւատա-րիմ հպատակներն են: Անգլի հայերը, առանց պաշտպանութեան, գրեթէ ամեն օր քիւրդերից կոյուպուլում են, որոնք յախջախում են նրանց պաշարները և հազուադէպ, այն-պէս որ մեր խեղճ եղբայրները ստիպված են լինում խուսափելու զաղթել մերկ և քաղցած:»

«Այդ ժամանակ պ. Կլէյտոն ասաց, որ Սա-միզ փաշա այդ օրերը հասել է Վան, և չը նայելով, որ ինքը հաստատ տեղեկութիւններ չունի այդ պաշտպանատարին տուած հրահանգների մասին, բայց ինքը կարծում է, որ նա եկել է քրիզերին նուաճելու և իրա-գործելու վերանորոգութիւնները: Այս բանի վրա պատգամաւորութիւնը, Կլէյտոնից հրա-ժարվելու ժամանակ, պատասխանեց, որ շուտով ձեռքը հասնում է և ձիւնը կը կատա-րի այն վերանորոգութիւնները, որոնց իրա-գործումը յանձնված է Սամիզ-փաշային: Հայ պատգամաւորներն այսպէս խօսելով, ա-նարկում էին ձեռնադր վրա հասնելուն, որը այս կողմերում շատ խիստ է լինում և իր բոլոր տեղութեան միջոցին մի նիւթական արգելք է դնում քրիզերի արշաւանքներին:

«Սա կաւելացնում, որ այստեղ տխուր լուրեր են հասել սովի մասին, որ այս կողմերի թըշուառութիւնները վերջին ծայրն են հասնում: Զը նայելով, որ այս նահանգը, ցորենի արտադրութեան կողմից, կայսրութեան նահանգներից ամենահարուստն է, բայց և անպէս այս րօպէին ցորենի մէկ կիլօն այն-տեղ արժէ 700 պիտտրի ահագին գումարը: Այստեղ զործածվող հացի մէջ բացի ալիւրից ամեն բան կայ. այս հացը, ասում է Վա-

նից ստացված մի նամակ, իր չորութեան կողմից միայն մեր երկրի քարերի հետ կարելի է համեմատել: Մարդիկ մեռնում են սովից, և մանուկների խմբեր թափառում են փողոցներում, և սրտաճիւղիկ աղաւաղներով հաց են մուրում: Այստեղ և Մանչեստրում ստո-րադրութիւն է բացվել: Բայց թշուառու-թիւնը այնպէս ընդհանուր է, որ շատ փոքր կարելի է օգնել այս թշուառներին:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻՍՏԻՑ

Կ. Պօլս, 3 փետրվարի

Հայաստանի սովի խնդիրը մեզ համար ամենէն կարեւոր հարցերէն մին է. սովից պէտք եղած օգնութիւնն անելու համար Կ. Պօլս մեծ աշխատութիւններ տեղի կունենան: Գաղութիւց կետր-նական յանձնաժողով մը կազմուեցաւ որ իւր ձեռքերն ունի ամեն թաղերու մէջ. ամեն կողմ մասնաժողովներ կը շրջագայեն անձամբ տուններ, և կը հաւաքեն նուէրներ, ամեն ոք հարուստ թէ աղքատ կը մասնակցեն հանգանակութեան: Կետր-նական մասնաժողով իւր ձեռքն կը տարածէ ամեն հայաբնակ դաւաճներ և քաղաքներ, յոյս ու-նեմք, որ արդեւնք բաւական նշանաւոր լինի: Պա-տրիարք սրբազանը բոլոր աշխատութեանց գլուխն կը համարուի, ինչն կատարած է Կ. յանձնաժողով-յոյ ընտրութիւնը և ընդհանուր հակողութիւնը կը-նէ: Վասնայ կողմերը այս ամառ անձրևի պակա-սութիւնը արդէն երկիւղ կուտային, աւելցուր վա-ճառականաց շահագրգիռներն սկսելու սեղանը ձգտումներ, և կառավարութեան ձեռք առած միջոցներն, որով ցորենը իւր շտեմարաններու մէջ կը պահէ, շատ սուղ ծախելու դիտարու-թեանմբ խաղիքը կը հաղորդեն թէ Պատրիարքա-րանի միջնորդութեամբ կառավարութիւնը Հայաս-տանի գանազան քաղաքները սովեալ տեղերն ցորեն խրկել է, հաղորդելով միանգամայն Պատրիարքա-րանի: Սովի գլխաւոր տեղն Վանն է, յետոյ Կոստան Ալաշկերտ, Պապագետ: Ռուսաստանի եղբայր յո-րդանաց պէտք չունեն տարաբաղ ճայոց օգնու-թեան ձեռք կարկառելու համար: Միայն «Մատիս» հետեւեալ տողերն յաւաք բերեմք, «Կը-լեմք թէ ս. Պատրիարք հայր» ս. Լիւթիմանայ վա-նքէն 24 ժամ հազիւ հեռաւորութիւն ունեցող Վա-ղարշակիւրի և Պայազետի տարաբաղ սովեալ ժող-վրայ Վան, Կաթողիկոսին հայրական գորովագութի-ւթեամբ չարծելու նամակ մը գրել է խնդրելով որ գտնէ Ռուսիոյ ազգայնաց մէջ հանգանակութիւն մը բանալու հաճի յօդուութիւն յիշեալ ողորմելի ազգայնաց: Քաղցը է մեզ հաւատալ որ ս. Պատ-րիարքի նամակն ընդունելէ շատ յառաջ Վեհա-փառ Հայրապետը արդէն ձեռն ի գործ արկած լինի: Անգլիական դեսպանատունն ու կաշխատի լոնդրայէն նպատ քերել յօդու ֆոքը-Ասիոյ սովից, և հաւանական է, որ յաջողի, թէպէտ և թիւք թերթներն հոս ալ քաղաքական դիտարու-թիւն նկատելով, անցեալներն յիշարար կը հրա-տարակէին, թէ լաւագոյն կը լինի որ Անգլիա իւր աղքատներն հոգայ: Քաղաքական դիտարու-թիւններն անակցաւ սարսափն եղած են և ուր որ նշան մը տեսնեն: Վեր յօդու: Սեր թերթմանը Էֆ-քեարի դատաստանը այս առիթներէն մին էր նոյն համար: Ինչպէս գիտէք թերթմանի տնօրէնը և արտօնատէրը ձերբակալուած էին իւր ժողովուրդը գրգռողք, ս. Պատրիարքի միջնորդութեամբ աղա-ստեղծան և «Եւաղթ» այս առիթի կը յարձկի Պատ-րիարքի վրայ թէ այս ալ կրօնական խնդիր է, որ հայոց Պատրիարքը կը միջամտէ, քաղաքականութիւն կայ, կը գոչէ: Վեհա-քաղաքականութիւն լի-նի, կուղէ չը լինի, Պատրիարքը թերթմանի խնդ-րոյ մէջ ուղիղ ընթացք մը բռնեց: Այս թերթը այժմ մեծ ժողովրդականութիւն մը ստացաւ, և օ-տարաց առջև Պատրիարքարանի բերանը կը համա-րուի: Գաղատաստը առ այժմ առկա է: Թերթմա-նի արտօնատէրը հոռիմէջան հայ մէր և թէ-պէտ թերթը կրօնական գոյն հանի, բայց Հասունի բարեկամներն լինելն հաւանական էր թուէր. ա-մեն ոք կը սպասէր Հասունի միջամտութիւնը, բայց մեր Պատրիարքը ուզեց ապացոյց մը տալ թէ ազգային ընդհանրութեան վերաբերեալ ամեն խնդ-րոյ մէջ ինքն է միակ պաշտօնական ներկայա-ցուցիչը: Հայաստանի վերաբերեալ խնդրոյ մէջ ալ Պատրիարքի քաղաքականութիւնն սկսած է այն գոյ-նը առնուլ, որով ալ միայն յանուն հայոց խօսի, ալ յայտնու թերթը ևս: Անցեալներն մէկ քանի դէպքերու մէջ տեսնեց որ սուրբի և ուրիշ խնդ-րոց մասին հայը և թուրք միաբան հանրագիրներ խրկեցին ի Պատրիարքարան, և ամենց մէջ նշա-

նաւոր էր Գրիկի գաղմագամի մասին խրկուած հաւա-րագիրը: Ամէտ Պէյ անուն գաղմագամը (Կառավա-րիչ) հաղուադիւտ պաշտօնեայ մ'է որ տեղական ժո-ղովուրդեան դատին պաշտպան է հայ թէ թուրք, ընդդէմ քրեւտ պէյերու. պէյերը չը կրցան հան-դուրեւել, բողոքեցին Կարին և Կապառնեցին, կառա-վարութիւնը, որ շատ անորոշեալք չէր տեսներ քրեւր պէյերու ընկճուելը, որոնց պաշտօնանկ ընել Ամէդ պէյ: Տեղւոյն հայ և եւրոպացի մասնա-կաշտպան եղան Ամէդի: Բայց ժողովուրդը դիմեց սրբազան Պատրիարքի և նորա միջամտու-թիւնը խնդրեց: Սրբազան Պատրիարքը ըսաւ նոյնա-ր, որ ձեռքէն եկածը չը պիտի խնայէ, և զի նրա-միտ ալ անձ է, յորդորեց դանձը որ ուղղակի Գրան դիմեն, և հայ ու տաճիկ կատարեցին Պատրիարքի ընածներն: Այսպիսի դէպքեր Սաիդ բաշայի ջիղե-րուն կը դպչեն, Լէյադի շատ անորոշելի չեն լի-ներ, բայց հայոց Պատրիարքարանի ազդեցութիւնը զօրացնելուն կը ծառայեն, զօրութիւն մը, որոյ կարի իսկ կարօտ էմը: Այս ազդեցութիւնը խոտախելու Գուրը միշտ հետամուտ է և քանիցս գրած եմք, որ գանազան առիթներ կը փնտռէ իւր փափագածը ձեռք բերելու համար. ասոնցմէ մին էր կալուածական վկայագիր տալու խնդիրն, զլիւսաորապէս մեր Պատրիարքարանի դիմադրութեամբ այդ որո-շումը ետ առնուեցաւ, որ էր պատրիարքաց կը-նիքներու առեթիւ իմաններու կնիքներն դնել: Բայց այժմ կը դուրսցուի որ թաղապետութեանց կնիքներն կարեւոր պիտի ճանչցուին, տեսնեմք այս մասին ինչ կընեն: Բարեբաղդաբար նախարարական փոխութիւններն մօտ կերկրի և արդարութեան նախարար ձեւվելթ բաշայի պաշտօնակութիւնը հաւանական է: Շատ աւելի դոհ պիտի լինեմք, երբ Սաիտ տապալու իւր Պատրիարքարանաց զօրու-թիւնը տկարացնելու խորհուրդը ի գործ դնելու համար ամեն աշխատութիւն կըլլայ, միւս կողմէ կը լսեմք թէ Լէյադը նոր Պատրիարքութիւն մը հաստատելու փորձեր կընէ Բիւրոքրակայն ժողո-վուրդը անտաւը: Տասարակութիւն մը ստեղծելու և այս հաւարակութեան զուրկ մեր Պատրիար-քաց հաւասար իրաւունքներ վայելէ. չեմք գիտեր թէ Բ. Գուրը լաւ ընդունելութիւն մը կընէ այսպիսի առաջարկութեան մը թէ ոչ: Գուրցէ այս առիթն Բ. Գուրը օգուտ քաղէ Պատրիարքաց իրաւասութեան ասանձը չափաւորելու կանոնադիր մը պատրաս-տելու: Բայց մեզ համար լաւ է խորհել թէ նա-ր մը չը կայ որ բողոքական հայոց քաղաքական հո-ղերն մեր Պատրիարքարանը կարենայ մտածել: Տաճ-կաստանի հայ բողոքականք տակաւին չեն ճանչ-ցուած գաւա մարմին մը, ունին ազգայնաւ մը, որ աւերակայ գործերն կը տնտեսէ. ազգապետը միան-գամայն իրեն յատուկ աշխատութիւններն ունի, ո-րոյնով կապրի: Պէտք է խոստովանել, որ աղգա-պետ պ. Մատթէոսեան պատուական անձ մ'է, ազգաւոր և աշխատող: Ինքնավարութեան խնդրոյ միջոցին ինչ որ կարող էր ընել ի նպատա այս խնդրոյն՝ բրաւ. ոչ միայն ինքն այսպէս շարժեցաւ, այլ Կ. Պօլսոյ լուսաւորեալ հայ բողոքականներն: Սրբա ազգային զգացումը վառ պահած են իրենց ստրին մէջ և դա դատաւարակութիւն մը աւելի զօրացուցած է այս զգացումը, շատ մաքուր հայե-րէն կը խօսեն, թէ իրենց ընտանեկան կենաց և թէ շուկայի դրաղմանց մէջ իրենց ամենէն մեծ տօնը՝ Կիւրմեդը մեզ հետ կը կատարեն յունուար 6-ի: Հայաստանի ինքնօրինութեան ջերմ փափագորնե-րէն են և իրենց ազդեցութիւնը ի գործ կը դնեն ևս այս: Իրենցմէ դոհ եմք: Ուր էր թէ այնքան առ գոհ լինէինք մեր հռովմէական հառունձան հա-յերէ: Բայց նոյնա շատ տգէտ և ճիշդութեան հոգով մնած կղերի մը ձերաններու մասնուած, միլիթարական երկոյթ մը չեն ընծայեր: Բայց և այնպէս կը տեսնուի, որ նոյնա մէջ իսկ շարժում մը տիրած է: Ներսիս սրբազանի գործերն տպաւո-րութիւն կընեն վրանին. նոյնա, որը կը կարծէին տեսնել մը թէ Հասուն գերապետական կաթողիկ տէ-րութեանց միջնորդութեամբ ազգին տունը պիտի վերականգնէ, ապաւն են, որ Հայաստանի համար այսպիսի մեծ խնդիրներ յուզուած ժամանակ Հա-սունի ձայնը չը լսուի: Անձնավորութիւններն վիրա-ւորուած կամ խաբուած ըլլալին իմացած, կամ լաւագոյն ևս ազգասիրութեան հին ոգին բողոք-կան դեռ մարած չըլլալով, շատերն ի նոյնաքէ ըս-կած են գոհութիւնամբ տեսնել ազգին լաւ ապա-գայ մը պատրաստելու համար եղած ջանքերն: Շատ վստահելի անձեր կը յայտնեն թէ այս նոր պատրաստուած խումը Հասուն գերապետաւոր վրա ճնշում կը բանեցնէ որ չէ թէ Ներսիս պատ-րիարքի ձեռնարկութեանց արդեւ լինի, այլ մա-նաւանդ ընկերանայ նմա: Անցեալներն Հասուն երբ մեր Պատրիարքի անձամբ այցելութիւն տուաւ, էր փոխարէն մեր պատրիարքական փոխանորդի տուած այցելութեան, բաւական մեկնութեանց տեղի տուաւ այս այցելութիւնը. շատ հաւանական է, որ իւր նոր հայրենաւոր մասը գոհացնեն ևս Հասունի

այցելութեան շարժումներն մին լինի Այն ա-
տեն ժամանակ չունեցայ այս նիւթի վրա գրել,
ինչպէս նաև ուրիշ խել մը կարեւոր նիւթը վրա
Տեսակցութիւնը բաւական երկար տեւած է. Ներ-
սէս սրբազան կը յայտնէ Հասունի թէ զինչ որ ալ
լինի երկու եկեղեցեաց տարբերութիւններն, քանի
որ խղճի ազատութիւնը կը յարգեն, պէտք է հա-
մարին եղբայրներ իրարու միշտ բարեկամ
մնան, և թէ ազգային ինքնավարութեան հարցի-
մէջ, որ լոկ քաղաքական խնդիր մ' է, Հասուն
գերապայծառ իւր բոլոր ջանքերն իրեն Ներսէ-
սի ջանից պարտաւոր է միացնելու Հասուն կը
պատասխանէ թէ զինչն եւ կը փափագի, որ միշտ
սիրով լինեն իրարու հետ, բայց ցաւալի է տեսնել
կը յարէ, որ հռովմէական եկեղեցիէն Հայաստա-
նեաց եկեղեցին դարձողներուն արտաքին կարգի
պատիւ կընծայուի, հայ մամուլը գովասանք
կը կարգայ և իրեն ազգային մեծ դէպք մը կը
տեսնէ այդ դարձումը խիստով, հետ Ներսէս
ազգային զգացմամբ արդէն մեզ հետ միասին ե-
ղող եղբայրներ երբ կ'առնուին համազօրմամբ ալ կու-
գան կը միանան մեզ, բնական է, որ ուրախանալը,
և պէտք է զարմանալ թէ ինչու արտաքին ցոյցեր
կընենք, վասն զի դուք իսկ, երբ չէ թէ այս-
պիսի պատուաւոր անձինք, այլ շատ անգամ մեր
եկեղեցիէն դատաւարեալ կրօնականներն առ ձեռ
կը դիմեն, փառաւոր ընդունելութիւն կը կատա-
րէք նոցա, և պէտք է ասել, որ այդ փառաւոր
ընդունելութիւնները այս վերջի վերադարձէն շատ
առաջ տեղի կուենանաւ:

Իսկ երկրորդն այս տեսակ խօսակցութիւններ
կը շարունակեն, Ներսէս միշտ ջանալով որ Հա-
սուն ալ աջակցի լինի իրեն: Բայց նոցա, որ կը
ճանաչեն զՀասուն, զիս չբացատրողներն, Հռով-
մայ քաղաքականութիւնը, մասնաւոր թիւրքերն
իրեն և Հռովմայ աժողակցութեան պատկեր
համար Հասունի ունեցած փափագն, չէ թէ յոյս
չեն տանք, այլ կերկնային իսկ որ Հասուն Բ. Կրան
և Հռովմայ համար շատ բարեկամաբար աշխատի:
Միև կողմանէ հակահասունեան հայք հետզհետէ
կը դիմեն ի մեր Պատրիարքարան, կը սեն թէ
մէջերն ինքն երբեք հասունեան իսկ կը զրո-
նուին: Վերջի օրերս Թէրքմանի արտօնաւոր
ըրն ալ արձանագրուեցաւ ի մեզ: Իսկ Հայաստա-
նի բարեկամութեանց համար աշխատութիւններն
Պատրիարքարանի կողմէ կը շարունակուին, և կը
նշմարենք, որ այս օրերս բաւական կարեւոր դար-
ձուածք մը տեղի ունեցաւ վրա է շատ գաղտ-
նաւորութեամբ: Բերլինի դաշնագրի ստորագրու-
եցաւ վրա անշուշտ մեծ յոյս մը դնելու չեմք:
Անցեալներն երբ զերգալ և Օրմանեան տունի մը
առթիւ Աւստրիոյ դեսպանատունը կերթան և
խօսք կը բացուի դաշնագրի 61-րորդ յօդուածի
վրա, գործակալաբար կասէ զէն, եթէ մեր փափագ-
ներն գործնական մենէ կատարուին ունենար, շատ բան
կընէինք, բայց մեր ազդեցութիւնը մինչև Արա-
բատ արդիւնաւոր ընել յառաջ որչափ գոհ պիտի
լինէինք, եթէ կարող լինէինք մեր անմիջական
որակցին եղող Մոսկովի յօդուածը գործեն կարգա-
գրելու Այս խօսքերուն պատասխան չը կրնար
զրուել: Գերմանական դեսպանատունը պ. Ռա-
տովնիքի հետ տեսնուած ատենին Օրմանեան
Բերլինի դաշնագրի համար ուրիշ ըսելը չը գտնէր
բայց եթէ մաղթել թէ 78 թուականը ծնաւ դաշ-
նագրի, 79 զայն գործարարելու եղանակներն ցոյց
տուաւ, իսկ 80 թուականը նորա գործարարութիւ-
նը կատարէ: Պ. Ռատովնիքի վարդապետի մաղ-
թանաց մասնակցել ամենէն խելացի միջոցը կը
համարի:

Յիշատակ յունական խնդիր մը ունի, որ բաւա-
կանէն աւելի է իրեն. ուրիշ մեծ տերութեան մը
առ ժամանակեայ ներկայացուցիչն Հայաստանի
պատուիրակ վաճառ վարդապետի շատ ցուրտ
ընդունելութիւն մը ընելու չը վարանիր, և երէկ
թիւրք թիւրքերն ցնծութեամբ կը ծանուցանեն թէ
Անգղիա Պարսկաստանն ալ իրեն բարեկամ ընելով,
Ասիոյ մէջ իսլամական տանգի միութիւն մը պատ-
րաստուելու հետամուտ է:

Չեմք դիտել թէ այս անգամ արեւօք լրջաբար
կուղեն թրքաց և Պէրժոմֆիլդի երազը իրականու-
թիւն մը ընելու փորձեր փորձել:

Գուցէ ամենէն աւելի Բուլղարաց շնորհակալ
լինեմք, որ իրենց համակրութիւնը միշտ կը պահեն
և պ. Զանքոֆ բաւական ժամանակ յառաջ կը
ներկայանար Պատրիարքի և կը մատուցանէր ա-
ռաջին պաշտօնաւոր և արտաքին գործոց նախա-
արար եպիսկոպոսի մի նամակն, որով կը հաղորդէր
թէ ինքն միշտ երանապաշտ է Ներսէսի, որ
զատուութեան օրերու մէջ այնքան իմաստուն խոր-
հուրդներով առաջնորդած էր իրեն. վրաս է որ
այդ իմաստուն խորհուրդներն իւր ազգին ալ օգ-
տակար պիտի լինեն. ինքն ամեն կողմ հրաման
տուած է, որ Բուլղարիոյ մէջ գտնուած հայք իւր

հարազատ Բուլղար պատուին և անոնց բարօրու-
թեանը համար ամեն հոգ տարուի:

Երբ օտար երկիրներու մէջ հայոց հանգստու-
թեան համար հոգ կը տարուի, բուն Հայաստանի
մէջ այդ հոգն ունեցողը կը պակսի և մեր խնդ ժո-
ղովուրդը աչքը մերթ հոս կը դարձնէ, մերթ հոն,
և չեն պակսիր անձեր, որ նորա գործոց զանազան
մեկնութիւններ տան: Վանայ մէջ հայք ստորա-
գրութիւն կը հաւաքեն եղբւր ուստական եկեղե-
ցւոյ գիրկը նետուելու համար:

Եթէ չեմ վրախիլ այս լուրը ամենէն առաջ Վեր-
ջակի թղթակցութեանց մէջ տեսնուեցաւ, հեր-
քումն ալ միասին ունենալով, այդ հերքումը ես
չէի ասել, այլ Պատրիարքարանի բարձրագոյն պաշ-
տօնակցի մը առ լէյալը տուած հերքումն էր:
Այս լուրը Կ. Պոլսէն Եւրոպա տարածուեցաւ,
միշտ աղբիւրը անգղիական դեսպանատունը լինե-
լով, իսկ մինչև ցարդ Վանէն վատահելի անձինք
դեռ բան մը չը գրեցին: Զարմանքս մեծ եղաւ
երբ պ. Շահնուր Վերջակեան Մամուլը գեկեմս մ' առ-
կուցանեց մէջ հետեւեալ տողերն կը հրատարակէր.
«Մամուլ» որ մերթ առաջակցներու կը բանայ իր
սիրականները, այս անգամ իրեն առաջակց կը ծխտէ
ճշմարիտ դէպք մը, Վանայ մէջ այս օրերս տես-
նուած շարժումն դէպի ուստականութիւն, որ
պաշտօնապէս մինչև Անգղիոյ կատարութեան
հաղորդուած է: Արդ՝ արժանահաւատ աղբիւրէ
կիմանանք թէ իր օք կայ այդ գաղտնի շար-
ժումն, թէ Վանայ մէջ ընկերութիւններ ստորա-
գրութիւններ կը հաւաքեն հայերն ուստական և
կեղեցւոյ ծոցը նետուել, թէ ուստ գործակալներ
կը գործեն անգղի, և ինձ գրողը կասեցաւ կը
յայտնէ թէ մայրաքաղաքի ընկերութիւններէն
մին մաս ունի այս գործին մէջ: Ար ընկերութեան
կազմակերպ չը գիտեմ, միայն կը գուշակեմ որ
ՎՃՀ ակի իս Կ. Պոլսոյ թղթակցին չ'այլ կ'ակ, որ
ամեն ինչ Ռուսաստանի մէջ վարդապետ կը տես-
նէ, իսկ Թիւրքիոյ մէջ սեպագոյն, գործը պիտի քո-
ղարկէ, և պիտի ցոյց տայ, որ այս լուրն անգղիա-
կան գործարարէ ելած է, և ինչ որ Անգղիացի է
Պէյքըր փաշային պէս սուտ է, արք շիւռ է...»

Արեւելեան Մամուլը այս տողերն բաւական աղ-
բեցութիւն ունեցած հոս, վասն զի այդ թիւրքն
լուրը թիւրք մէ և կարեւորութիւն ունի:

Եւ պ. Շահնուրի նման պատուաւոր թղթակ-
ցի մը, զոր կը յարգենք շատ անգամ բոլորովին
հակակարծիք լինելով հանդերձ, քանի մը դիտո-
ղութիւններ ընել աւելորդ չեմք համարի:

Վանայ մէջ ուստաց եկեղեցին յարեւոյ համար
հանրագրութիւն մը պատրաստուած լինելն ոչ ոք
ստոյգ գիտէ, պ. լէյալի գրասենեակէն ելած
լուր մ'է, կրնայ լինել որ Վանայ մէջ ստորագրու-
թիւն մը հաւաքուի և լէյալի շահը այնպէս պա-
հանջէ, որ այդ ստորագրութեան կրօնական գոյն
մը տայ: Փափագելի է որ այդ արժանահաւատ
աղբիւր գուշակուի ձեռն ստորական ըկայօրը
եղած չը լինի, վասն զի այդ պարտի բարեմտու-
թիւնը քիչ շատ կասկածելի է մեզ. անցեալներն
կարեւոր է որ մը Վարդապետի՝ գրասենեակն կը
գտնուի, երբ ձեռն պարտն հոն եկաւ և խնդրեց
որ Արեւելեան Մամուլը ու Քորթի վերջի թիւերն
իրեն տան տեսնէ, նոցա գործակալաբար մէջ մէկ
օրինակ ցոյց տուաւ և երբ պարտն ամենայն ան-
տարբերութեամբ սկսաւ թղթերը կտրուել, պ.
գործակալաբար ետեւ թէ հաստով չը ծախուի:—
չէ, կարգաւոր համար է, բայց—այդք է բաժանորդ
լինելը, և քաղաքականութեան թիւրքերն ետ ա-
ռաւ: Չեմ պարտն բան մը միմաջ քիչն տակէն
ու գնաց. քանի մը օր վերջը տեսնեմք, որ սկսաւ
Նաթանիանի և Վարդապետի զէմ յարձակի, և
կըսէր ինձ՝ դեռ նայէ ինչեւ կրնամ ընել: Այդ
պարտն որ կը պարտենայ թէ Շահնուրի տեղե-
կութիւններն ինք կը հաղորդէ, օգուտ քաղած է
առթիւ Վարդապետի՝ զէմ ալ բան մը անգղիաւ,
ինձ հաւանական այս կը թուի, իսկ թէ այս հաւա-
նականութիւնը ճշմարտութիւն մ'է, այն դուք
կրնաք գիտնալ և ըստ այնմ շարժիլ ձեռն բէպո-
թիւն հետ: Իսկ եթէ այս չէ, երեւակայութեան ար-
դիւնք է, Վանայ մէջ ընկերութեան ստորագրու-
թիւն հաւաքելու մասին ալ արժանահաւատ աղ-
բիւր գրուած մը չը տեսնեմք, և դժուարաւ կը
հաւատանք, որ համար չըլլար այդ ընկերութեանց
նախնիներն ի հրապարակ հանել: Եթէ դուք ու անգ-
ղիական դեսպանատունը այս տեղեկութիւնը ու-
նեմք, արեւօք Բ. Գուրը չը գիտէր և Պատրիար-
քարան տեղեկութիւն չը խնդրէր. խնդիրն կրօ-
նական մի նկատէք. Բ. Գուրն ալ գիտէ որ կրօ-
նից ետեւէն նիւթական շահեր կուգան: Վերջ յի-
շած եմ թէ պ. Չերքոյ այս լուրն պաշտօնական
հերքումով տուաւ լէյալի, եւ ուրիշ բան չեմ
ըրած: Բայց եթէ այդ հերքումը հրատարակուի Վեր-
ջակի մէջ, և դուք զայս կանուանէք «գործը քո-
ղարկել» մը մէջ կը գտնուի բազմաթիւ անձինք
որ կը կարծեն թէ այս կրօնափոխութեան լուրը

Անգղիոյ մէջ տարածուի, մասնաւոր թէ հեղինակն
ալ լէյալը ըլլալէն վերջը ալ վախճուելու բան չը
կայ: Բարեկարգութիւններն փոխադրուելու միջոց
մը կը համարեն: Մտածութիւն մ' ալ այս է:

Ոչինչ նուազ զարմանք պատճառեց նաև այն
խօսքերն զորս գործակալներ կը գործեն անգղիաւ:
Այս խօսքերուն հաւատարմ համար պէտք է որ
ճանաչատանի մէջ Ռուսիոյ գործելու եղանակին
վրայ տեղեկութիւն չունենալու:

Եթէ Ռուսաստան ճանաչատանի քրիստոնէից
վրա մեծ ազդեցութիւն ունեցած է և նոցա հա-
մակրութիւնը գրաւած է, ինչ կուղէք ըսէք, այս
իրողութիւն մ'է: Գործը զիստաւոր պատճառն է որ
նոցա մէջ կրօնական հերձուած և բաժանում ձը-
գելու հետամուտ չէ եղած, յանուն քրիստոնէու-
թեան պաշտպանած է զանոնք: Այս ընթացքը
այնքան նմա յաջողած է որ չեմք գիտէր թէ քի-
չու անկէ պիտի չեղի: Հայաստանի մէջ աղբե-
ցութիւն տեսնուելու համար, բայց այդ աղբեցու-
թիւնը արդէն ունի, և երբ Ռուսիա փորձ փորձէ
կրօնական բաժանմամբ մեր մէջ նոր պատակ-
տում ձգելու, միթէ կը կարծէք որ իւր բարեկա-
մաց թիւը շատ և շատ զգալի կերպով չը նուազի
և իւր ազդեցութիւնը շատ աւելի չը տկարանայ:
այս այնպիսի ճշմարտութիւն մ'է որոյ վրա պոն-
դելու հարկ չը կայ. և եթէ հայք ինքնաբերաբար
այս շարժում մը ընեն, կրնանք ապահով լինել որ
Ռուսիա պաշտօնապէս պիտի միտքէ զանոնք ըն-
դունել: Ինչ կը կարծէք, եթէ Անգղիա կարող
լինէր կամ ուղիւնար Հայաստանէն անգղիացի
կամ ամերիկացի բողոքական քարոզիչներն
եւ կանչել, կամ կանչել առ բողոքականութեան
պաշտպան և զայն տարածող լինելէ ետ կենար,
միթէ չէք կարծել որ Անգղիոյ բարոյական աղբե-
ցութիւնը շատ և շատ աւելի կը մեծնար: Ռուսիա
ըրածք գիտէ, անոր համար կրնամք վրաս լինել
որ Վանայ մէջ անգղի գործող գործակալներ չու-
նի, իւր շահը այսպէս կը պահանջէ: Երբ պ. Շահ-
նուր կըսէք թէ «Հայկակ ամեն ինչ Ռուսաստանի
մէջ վարդապետ կը տեսնէ, իսկ Թիւրքիոյ մէջ սե-
պագոյն» խնդրեմ Թիւրքիոյ մէջ վարդապետ իր մը
ցոյց տուէք. իսկ Ռուսիոյ մէջ վարդապետ իրեն
պաշտպան չեն, և երբ կըսէք թէ (ըստ Հայկակի)
ինչ ալ անգղիացի է Պէյքըր փաշային պէս սուտ
է, արք շիւռ է, դուք անշուշտ Պէյքըրի անձին
նկատմամբ պէտք եղած տեղեկութիւններն ստա-
ցած էք, Թիւրքն այժմ զղլումի եկած լինի: Իսկ
իւր գործոց մասին առանց երկար բարակ գրելու
«Թայմին» Այնթապի թղթակցին հետեւեալ տողերն
յառաջ կը բերեմք. «Բնիկանոր ստաւորութիւնն
այն է որ Պէյքըր փաշային յանձնարած գործն այն
հին պաշտօնն է, զոր քննելու տեղեկագրէ կա-
նուանեն: Եթէ ուղիղ է այս լուրը, ժողովուրդը
մեծ մասամբ իրաւունք ունի սկիստիկեան լինել
այս նոր յանձնարարութեան յառաջ գալու բարեկե-
րուն նկատմամբ:—Կարծեմ ես ալ ասկէ շատ
տարբեր չէի գրած «Մշակին» և մեղաւոր չեմ
սկսուելու: Անգղիոյ ձեռնար գործադրուելը բարե-
կարգութեանց մասին մեր զայդ utopie սեպած
եմք առջի օրէն և այդ ոչ թէ ընդգրկմամբ, այլ
որչափ հնար է լաւ մտածելով. դժբաղդաբար
դէպքերն միշտ իրաւունք տուին մինչև այժմ: Երանի
թէ քաղաքականութիւնը փոխուէր և անգղիական
բարեկարգութիւնը նոր կերպարանք առնուի:

Համառօտ ակնարկ մ'ալ ներքին գործերուն
տարբ. Գունուար 25-ին Ազգային երեսփոխանա-
կան ժողովը գումարեցաւ, բայց բան մը չըրաւ.
Իսկ մը խնդիրներ կային որոնք և ոչ մէկուն լու-
ծում տուաւ. Տիրանակերտի խնդիրն առկա
մնացած է, նոյնպէս շատ մը հարցեր: Նկատ
ճամբայ չէ. տան և հինգ օրն անգամ մը երես-
փոխական ժողովը 3—4 ժամու չափ կը գու-
մարի, ատենական գործերը կը կարգադրէ քիչ մը
և հազիւ թէ ուրիշ խնդրով մը զբաղուի կը սկսի
անկելու: Երբեք կուգայ, Ներքին կանոնադրու-
թեանը դիւաններու բաժնուած է. անձնիւր դի-
ւան իրենց վերաբերեալ խնդիրներն նախ պիտի
քննեն, յետոյ ժողովը մէջ տեղեկագրով մը խըն-
դիրներն դիւրաւ կը լուծուին. բայց դիւանի ան-
դամներն իսկ զիւրար տեսնելու դժուարութիւն ու-
նեն և այնչափ խնդիրներ կան որոնց տեղեկագրի-
ներն երկար ատենէ կը սպասուին:

Հայաստանի մէջ առաջնորդներու սովն օր քան
գոր աւելի զգալի կը լինի. շատ գովութեամբ կը
խօսին Նիւթական առաջնորդ Հմայակ վարդապետի
վրա. Երբեքայն զպրոցներն բարեկարգեց, ժող-
ովուրդը արթնացուց տղիւթեան քունէն, և հայոց
անունը օտարաց առջի յարգելու ըրաւ. «Tempo»
լաւ թղթակցութիւն մը գրած է այս կերպակալի
նկատմամբ. կարծեմք պատրիարքարանէն եկաւ
կոպտութեան վկայագրի պիտի տան: Կը լսեմք
թէ մեր շնորհագրող Ռուբինեան Ամբրոսիոս վար-
դապետն ալ Բարեկրի առաջնորդ ընտրուել է, թող
երկարադրական վարժարանը հոն բանայ:

Պատրիարքարանը անյարմար ընտրութիւններ ալ
կանէ. օրինակի համար Չարսաճաքի մէջ Գովհան-
նէս վարդապետը 18 տարի է առաջնորդութիւն
կընէ և ժողովուրդը անբան ընելու համար ինչոր
ձեռքէն կուգայ, ըրած է, ինքն ալ այդ վիճակին
հասած մարդ մը կը սկսուի. ժողովուրդը կը գան-
գատէր, մասնաւոր թէ քիւրդ պէյրու մեղակից
լինելուն կասկածներ պակաս չեն. կը լսեմք թէ
Պատրիարքարանն այս անձն բունք Սեբասիա տե-
ղապահ ըրած են, Սեբասիա մէջ աղէկ առաջնորդ
մը կարեւոր է. հետզհետէ հայք քիւրդ կը լինեն:
Ազգային երեք ընկերութեանց միացման գործն
կը շարունակէ. յունուար 27-ին կիրակի օր Վի-
լիկեան ընկերութեան ընդհ. ժողովը ևս ընդունել
է միութեան սկզբունքը, և այսօր «Կարոցասիրաց»
Արեւելեանը նիստ ունի, արդիւնք վաղը կ'իմանաւ:
Գունուար 31-ին տեղի ունեցաւ «Կարոցասիրաց»
—Արեւելեանի պարահանդէսը շատ չեղի կերպով,
լէյալը սգոյ պատճառաւ ներկայ չէ գտնուած,
և կարծեմք 4000 բուլբի մօտ հասոյթ մը մնա-
ցած լինի: Այս տարուան պարահանդէսներն խիստ
շատ են:

Կիմանալք թէ երէկ «Կարոցասիրաց» —Ա-
րեւելեանը միութեան սկզբունքը ընդունած է:
Բայց երէկ վարչութեանց մէջ կըսուած պայմա-
գրութեան վրա դժուարութիւններ յարուցած է.
ստոյգ տեղեկութիւնք յաջորդ նամակաւ:

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 փետրվարի: «Правит.
Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ պետա-
կան խորհրդարանը իր փետրվարի 19-ի
որոշման համեմատ, բոլոր անդամներով ներ-
կայացաւ Փազաուր Կայսրին յայտնելու իր
հաւատարմահայտաւ շնորհաւորութիւնը.
Կայսրը նրանց աշխատութիւնների ու զգաց-
մունքի համար շնորհակալութիւն յայտնեց,
և համբուրելով խորհրդարանի նախագահ
Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլայեւիչին, ա-
սաց թէ յոյս ունի, որ խորհրդարանն առա-
ջուայ պէս կ'օգնի նրան ապագայ դժուարու-
թիւնների մէջ: Սենատը նշնայէս իր բոլոր
կազմակերպութեամբ ներկայացաւ. Կայսրին, և
բաղաւորութիւն ունեցաւ լսել նրա ճառը,
որի մէջ հաստատ յոյս է յայտնված, թէ սե-
նատի գործունէութիւնը միշտ ուղղված կը լի-
նի օրինական կարգադրութիւնները հաստատ
հիմքերի վրա դնելու:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 փետրվարի: Երէկ կա-
նուի առաւօտուանից սկսած Պետերբուրգը
զարգարվեցաւ գրոշակներով, գրգռելով և տը-
ր ա ն ս պ ա ր ա ն տ ն ե ր ո վ: Ծանախեալ եւ
կեղեցիներում և բոլոր թէ պետական և մաս-
նաւոր հիմնարկութիւնների մէջ մաղթանք
ներ կատարվեցան: Առաւօտուայ 10 ժամին
Ձմերային պալատի առաջ շարված էին զօ-
րավորքը. պիտուրական երաժշտութեան և
երգեցիկների միաձայն խօսք բոլոր թիւրքա-
նօթներն ուղջոյն հետ միասին կատարվեցաւ
հիմնը: Փազաւոր Կայսրը պաշտպանի վրա
պայից ուղջունում էր զօրքերին և ժողովրդին,
որոնք նրան բարձրաձայն ու ցնծայի ձերան-
ներով շնորհաւորում էին: Սրն անցաւ ժողո-
վի դուրսը հրճուանքներով: Նրեկոյեան վայ-
րուն լուսաւորութիւն եղաւ: Փողոցները
ծածկված էին բողոքի ժողովրդի բազ-
մութեամբ, և աժոււ էին երաժշտական 16
խումբեր: Փառքօններում շատ անգամ կա-
տարվեցաւ ազգային հիմնը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 փետրվարի: Լուր տա-
րածվեցաւ, թէ այսօր կէսօրից յետոյ ժամը
մօտ 3-ին Բօլշայա Մօրսկայա անուանված
փողոցի վրա, կոմս Լօրիս-Միլիքովի կառք
նստելու միջոցին, մի անցյալ անձն ընկալի
արձակեց նրա վրա. կոմսը վերաւորված չէ,
յանցաւորը կայանաւորված է. մանրամասնու-
թիւնները ղեռ յայտնի չեն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 փետրվարի: Կոմս Լօ-
րիս-Միլիքովի կանաչին սպառնացող եղանա-

գործի արձակած առաջին գնատիրը, ծախելով կոմսի վերաբերման, կապա նոյնպէս և սէրտու- կին. եղբունագործն աշխատեց երկրորդ ան- զամ արձակել, բայց այդ միջոցին կոմսը յա- ջողացրեց այնպէս ուժով խփել յանցաւորի ե- րեսին, որ նա երեքաց, և քիչ մնաց, որ վայր ընկնի: Կոմսին ուղեկցող կողակը բռնեց յանցաւորի բամակից, և վրա վազով մար- ղին օգնեցին եղբունագործին կախաւորե- լու: Հաստատապէս պատմում են, որ կոմս Լօ- ղիս-Մելիքով ժպտալով ասաց. «Ո՞ր համոզված եմ, որ դեռ ձուլված չէ այն գնատիրը, որ կարողանայ ինձ սպանել»: Եղբունագործը աղ- քատ հապկած մի երիտասարդ հրէայ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 փետրվարի: «Петербургскія Вѣдомости» լրագիրը հաղորդում է, որ կոմս Լօրիս-Մելիքովի կեանքին սպա- թարկւած է:

Նացող եղբունագործը, այսօր փետրվարի 21-ին կը գատվի պատերազմական դատարանի (ПО- ЛОВОЙ СУДЪ) առաջ. ինչպիսիքը լքցրած էր կոտորակներով այդ կոտորակներից մէկը, որ մոլորվել մնացել էր կոմսի վերաբերման մէջ, զանկում էր կոմսի ձեռքին: Քաղաքապետն արաւ եղբունագործի առաջին հարցումովը, որից երեւաց որ նա հրէայ է, և նրա անունն է Իպպոլիտ Մլոդեցկի, որը անտարբեր յան- զգնութեամբ յայտնեց հետեւեալը.—«Ես չը լինեմ, ուրիշը կը լինի, ուրիշը չը լինի, մի երրորդը կը լինի, բայց հաւաստի կարելի է ասել, որ մեզից մէկն անպատճառ կը սպա- նէ կոմս Լօրիս-Մելիքովին:—

Իմպաքի—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Կենտրոնական Գրաքանութան Բրաքանութան ցուցման հետեւեալ գրքերը:

Մանկական երգեր Գառնա-Քաթիկայի, կազմած	—	բ.	25	կ.
— նոյնը անկազմ	—	»	15	կ.
Քաւաւազ մեղու պատկերազարդ, կազմած թարգ. օր Ն. Տէր- Մարկոսեանի	—	»	40	կ.
Կարմիր լապտեր պատկերազարդ և կազմած, թարգ. օր Ն. Տէր- Մարկոսեանի	—	»	50	կ.
— նոյնը առանց կազմի	—	»	30	կ.
Վէպեր. Յ. Գրիգորեանցի	—	»	60	կ.
Պէպօ. կոմեդիա երեք արարվածով, հեղ. Գ. Սոււնդուկեանի	—	»	30	կ.
Սօրեն կամ աշխատութիւն, հեղ. Տ. Գառնա-Քաթիկայի. Գաղիկեանցի	1	»	—	կ.
Խորհրդաւոր կղզի, հեղ. ժ. Վերն 3 հ. թարգ. Գաղիկեանցի	4	»	—	կ.
Դիւանական բլուր, հեղ. Էօթէն Սիւ 2 հ. թարգ. Գաղիկեանցի	2	»	75	կ.
Պատանական ներշնչութիւն, հեղ. Հրանտ Սաստուրի	—	»	60	կ.
Սահմանադրութիւն և հայ ժողովուրդն Հր. Սաստուր	—	»	35	կ.
Մի կաթիլ արտոյր, գոր կը հեղու. Սիւսակ հայ մոխրին վրայ	—	»	35	կ.
Խօսք զհայրենեաց հեղ. Վ. Վ. Պարտիզանցի	—	»	70	կ.
Քորոս աղբար Հայաստանի ճամբորդ հեղ. Սրուանձեանց	1	»	25	կ.
Մանանայ նոր հեղինակի	1	»	75	կ.
Սիրաք և Սամուէլ բարի հօր կրթական դասեր, հեղ. Խրիմիան Հայրիկ	1	»	45	կ.
Մարգարիտ արքայութեան երկնից, նոյն հեղ.	—	»	75	կ.
Վանդոյժ. կուժ մի ջուր իւր այրած հայրենեաց վերայ կ'սրկէ Խրի- մեան հայրիկ	—	»	20	կ.
Քէ ինչ շահեցանք Բերկին վեհաժողովէն, հեղ. Մ. Չերազի	—	»	40	կ.
Հայաստան և Իտալիայ նոյն հեղ.	—	»	60	կ.
Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դատախազութիւն Ս. Ար- ծրունու	—	»	50	կ.

Հրատարակութիւն Հարմայր Մտերեանի				
Փարոս Հայաստանի, պատկերազարդ հանդէս	1	»	—	կ.
Նոյնը և քոյր Գերմանական վէպ. պատկերազարդ	—	»	30	կ.
Արքայադուստր Գերմանական վէպ. պատկերազարդ	—	»	35	կ.
Հակապական ձեռքեր Անգղիական վէպ. պատկերազարդ	—	»	10	կ.

Իշխան Բէհրուժեանի հրատարակութիւններ				
Վոյքի իմ վեչեր, Փարս երեք պատկերով Մ. Տ. Գ.	—	»	40	կ.
Բեքեր բիձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ	—	»	25	կ.
Աշխատային երկնից գիւղում, վաղովիկ մէկ արարուածով	—	»	25	կ.
Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով	—	»	40	կ.
Ժանօ և Ժանէտ, օպերա-փողովի, մէկ գործողութեամբ	—	»	40	կ.
Պառանքներ խրատ. վաղովիկ մէկ արարվածով Մ. Տ. Գ.	—	»	50	կ.
Տիկնիկը նրան սպասում է, կատակեր գրութիւն մէկ կ'արա- թուածով	—	»	30	կ.
Անանուն կատակ. կատակերգութիւն մէկ արարուածով	—	»	40	կ.
Փակուած դրան մօտ. պատկերազարդութիւն	—	»	30	կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուների, դասական պիտոյքներ ուսումնարանների և աշակերտների համար. Հայերէն, Ռու- սերէն և Գաղիկեան վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և գիտու- թեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արա- դութեամբ: Օտարաբարաբայի իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետեւեալ հասցեով Вѣ Тифлисъ. Въ Центральную книжную торговлю

8—10



Կիրակի, յունվարի 27-ից սկսած, Գոռնիքեան փողոցի վրա, ցերեկի մօտ գտնված բալագանի մէջ կը ներկայացնուի հասարակութեանը երեք այստեղ չը տեսնված երեւոյթ, այն է ԵՐՐՕՊԵՅԻ ԼՈՒՆ- ԶԻՆ ՀՍԿԵՑ ՕՐԻՈՐԴ ԱՄԱԼԻԱ և աշխարհի ամենափոքր ԿԱՐԼԻԿՆԵՐ ՄԵՐԿԻՉ ՀԵՆՐԻԽ ՎՕԼԳԻ և ՄԵՐԿԻՉՈՒՇԻ ԼՈՒԻՉԷ Տե- ղերի գնեք՝ առաջին տեղեր 50 կօպէկ, երկրորդ 30 կօպէկ: Երեւանները կ'ենն են վճարում:

8—12

ՆԵՐՎԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԵ ՏՊԱԳՐՎԻ

"ԿԱՅԾԵՐ"

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակու թիւն ԲԵՔԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներէ իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երես- ներ: Լինն մէկ հատորի գինն է 1 ռ. 50 կ., իսկ միասին 3 ռ.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում: Ստորագրել կարելի է՝ ԳԼԵՆՈՒՆԵՐՈՒՄ այն պարտնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐ» տպագրութեան համար, իսկ թիֆլիսի մօտ է գիւմլի «ՄԵ- շակի» խմբագրատանը Յ. ՄԷԼԻՔ-ՅԵԿԻՄԵԱՆԻՆ:

Աշխարհահռչակ արտիստ և պատանշան- ների ասպետ Ն. Ա. Կոչով պատիւ կունենայ մի մեծ սպիրիտիական ներկայացումն տալ Արծրունու թատրոնում: Ներկայացման օրվայ մասին կը յայտնվի առանձին յայտարարու- թեամբ:

2—2

ՆԻԿՈԼԱՅԵՍԿԻ ԱՐԺՈՒՆԱԿԱՆ ՌՈՒՍԱՅ ՌԻ- ՍՈՒՄԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ հարկաւոր է ՎԱՐ- ՁԵԼ չորս մեծ և չորս միջակ սենեակներ մեծ բաղով, Հաւաքարում, աւելի ՊՈԿՐՈՎՍԿԻ ԿԱԶԱՐՄԻ մօտերում:

Այդպիսի շինութիւն ունեցողներին խն- դում եմ շնորհ բերել յիշեալ ուսումնարանը, ՊՈԿՐՈՎՍԿԻ ԿԱԶԱՐՄԻ ԳԻՄՆԱՅ, և խօսակցել պայմանների մասին ուսումնարանի տեսչի հետ՝ ամենայն օր ճաշից յետոյ 3 ժամից մինչև 7 ժամը երեկոյեան:

3—3

ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ՊԱԼԱՏԱԿԱՆ ԳՐԱ- ՍԵՆԵԱԿԸ հրաւիրում է ցանկացողներին ՂԱ- ՐԱՅԱԶՈՒՄ մի ԳԱՐԷ ՇԻՆՈՒԹԻՒՆ կառուցա- նել: Շինութեան ՊԱՐԸ կարելի է ՏԵՍԵԼԻ պայտաական ԳՐԱՍԵՆԱԿՈՒՄ ներկայ տար- վայ մինչև մարտի 1-ը:

2—3 (2)

Փետրուարի 6-ին ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՈՒՄ վախճանուել է տիկին ՆԻԿՈԼԱՅԵՍԿԻ ԵԶԵԱ- ՆԷ: Այն անձինքը որոնք կը ցանկան յարգել հանգուցելով իշխանուհի հրաւիր- վում են շնորհ բերել ԿԻՐՈՎՍԿԻ փար- վարի 24-ին ՎԱՆՔԻ ՄԱՅՐ ԵԿԵԼԵՅԻՆ, ուր կատարուելու է նորա հօգեհան- զխոր:

2—2

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ՌՈՒՍԱՅ ԲԱԶԱՐԻ և ՀԱՂԱ- ԲԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա կառուցված են Ա- ՌԵՏԻՍԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ վաճառ տալու համար. ուսուցչ բաղարի վրա 18 համարներ և Հաւաքարի հրապարակի վրա 40: Յիշեալ շինութիւնները ՎԱՐՁՈՎ վերցնել ԶԱՆԿԱՅՈՒ- ՆԵՐԸ հրաւիրվում են քաղաքային վարչու- թիւնը, որի ԳՐԱՍԵՆԱԿՈՒՄ ամենայն օր, բացի տօն օրերից, առաւօտեան 10 մինչև 2 ժամը երեկոյեան վարձի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ կը յայ- տնվեն:

3—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ հայոց ազգային Հոգեւոր ԴԷ- ՊՐՈՑՈՒՄ, հոգաբարձական խորհրդարանի մէջ, զարդ ՄԱՐՏ ԱՄՍՈՑ 12-ին, երեկոյեան ժա- մը 7-ին, կը լինի ԱՃՈՒՐԴ (առանց կրկնա- ձուրդի) կապով տալու ԹԷԼԷԹԻ սուրբ Գէ- որգայ ուխտատեղւոյ գալթումը ՄԻ ԿՐՊԱԿ ԻՐԱ ՄԻ ՍԵՆԵԱԿՈՎ: Պայմանաթուղթը կա- րելի է կարգալ հոգաբարձութեան զիւանա- տան մէջ ամեն օր բացի կիւրակից և տօ- ներից, առաւօտեան 10-ից ց 12 ժամ:

Անդամ հոգաբարձութեան Ար. Նահապե- տեանց

ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ն ր զ ն կ ե ա ն ց բ ա հ ա ն ա յ—Մանկա- կան երգարան, երգեր և պար-երգեր ընդունված է ներսիսեան և Գայանեան դպրոցներում: գինն է ռ. 20 կ.
2. Մ ե ծ ա տ ու Ն և ա ն ց—Երգարան աղջ- կանց և աշակերտու հեաց Հայկական ու- սումնարանաց 1 ռ. — կ.
3. Բ ժ ի շ կ Բ. Ն ա ա ս ա ր դ ե ա ն ց—Դիֆտերիտ բողոքացաւ ռ. 25 կ.
4. Բ ժ ի շ կ Գ. Տ է Ր—Գ ր ի դ օ ռ ե ա ն ց—Վա- րակի հիւանդութիւններ.

(Մաղիկ, կարմուխ, սկարաւին, բժաւոր օրֆ, անդրադարձ տեղը, դիֆտերիտ, ընդ- հատ տեղը, խօսեայ, դեղին տեղը, որովայ- նատիֆ և ժանտախտ): Սրաց յատկութիւններն, ծագման և տա- րածման եղանակներն և նախապաշտպանու- ղական միջոցներ:

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկա- սեան գրաքանութան ցուցում:

7—8

Մանուկ բարձնասարան այր- վելուց յետ, նորից բացված է իս- տակ մամի առևտուր Սիճեան փո- ղոցում Լըծրունու բարձնասարա- յումը № 14. իւրաքանչիւր շաբաթ ստացվում է նոր շինուած խտակ մամեր իմ սեփական զավթից և որոնք վաճառվում են էժան գնե- րով. խնդրեմ գնողներին չը թող- նել իրենց այցելութիւնները:

Յօվաննէս Կուրծեան

4—4

Փետրվարի 12-ից ԲԱՅՎԵՑ իշխան ՍՈՒՄ ԲԱՏՈՎԻ տանը ԿՈՒՆԻՏԵՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (не карня) մազադին «ВАРШАВСКАЯ ПЕКАР- НЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմոր եղէն և ռ, նոյնպէս կը վա- ճառվին զանազան տեսակ կօնֆէտն եր աղ- ժան գնով: Թէ փոքր և թէ մեծ քանակութեան ջանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐՄ ԲԱՆԻՑ: Օտար քաղաքացի կարող են դիմել հե- տեւեկները կը կատարվին ամենայն ճշդութեամբ գնողներին մեծ զիջումն անելով և փօստի ծախս մեղ վրա առնելով: Կօնֆէկտների գինը ֆունտ 40 կօպէկից մինչև 1 ռ.:

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որ աւարտել է իւր ու- սումն Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ օրիորդաց ԳԻՄՆԱ- ՋԻԱՆԵՐԸ մինի մէջ, ցանկանում է վարժու- հու պաշտօն ստանալ Կովկասի ՀԱՅՈՑ ՌԻ- ՍՈՒՄԱՐԱՆԵՐՈՒՄ: Պայմանները խորհու- ուղարկել հետեւեալ հասցեի. С. Петер- бургъ, Новая улица, домъ № 14 кв. № 10 Хр. Ив. Иоану.

5—5